

ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Եղևրու և Եղևիկ :

Մարդ չկայ որ տեսած ու սիրած չըլլայ վայելուչ ու կայտառ եղջերուն , աւրագաշարժ ու թեթևաբեռն մարմնով , ճկուն և ջղալից անդամներով , երկայն վիզով և երկու ծառերով զարդարուած գլխով , վառվռուն ու անոյշ աչքերով , և համարձակ ու միանգամայն վախկոտ բնաւորութեամբ : Եղջերուն “ այն անմեղ , հեզ և հանդարտ կենդանիներէն մէկն է , ինչպէս կ'ըսէ Պիւֆօն , որոնք կարծես թէ անտառաց միայնութիւնը պաճելու ու կենդանացընելու համար միայն ստեղծուած են ” : Անդանեաց վրայ տեսնուած ամենէն աւելի հետաքրքրական երևոյթներէն մէկն է այն ոսկրուտ գոյացուածութիւնն որ եղջերուն ճակատին վրայ կը բուսնի . և աւելի զարմանալի՝ իր օրինաւոր , ճիշդ ու անփոփոխելի ընթացքով աճելուն ու նորոգուելուն համար : Անդանին երկու տարեկան եղած ատենը կը սկսի ձևանալ այս եղջիւրը , և սկզբան մէկ բուն մըն է առանց ճիւղի . հետեւեալ տարին՝ երկու բուն կը բաժնուի , որոնց իւրաքանչիւրն երկու կամ երեք ճիւղեր կ'արձրկէ : Երրորդ տարին՝ կէս պսակաձև ծայր մը կ'առնեն եղջիւրները . տարի տարուան վրայ ասոնք աւելի կը հաստընան , և պսակաձև ծայրն ալ կը մեծնայ և երբեմն ինչուան տասը տասուերկու ճիւղ կը բաժնուի , և զանազան ձևեր կ'առնէ :


Եղջերուները գարնան իրենց եղջիւրները կը թափեն . ութը տարին անցած ժեր եղջերուները՝ փետրուարի վերջերը կը թափեն , եօթը տարեկան եղջերուները՝ մարտին մէջերը , վեց տարեկան եղջերուները՝ ապրիլի մէջ , և իրեքէն մինչև վեց տարեկան մատաղ

եղջերուները՝ մայիսի մէջ : Ան ատեն մէկէն անտառներու մէջ կը պահուր տին՝ մինչև որ նորէն եղջիւրնին բուսնի , որ իր աճմանն ու պնդութեան վերջի աստիճանը օգոստոս ամսուն կը հասնի . այն միջոցին ծառերու կը քսեն եղջիւրնին՝ որպէս զի հանեն այն չորցած մորթն որ դեռ վրան կպած է :

Եղջերուն մէկուկէս տարեկան եղածին պէս՝ զուգուելու ժամանակը կը հասնի , թէպէտ մարմնով դեռ պզտիկ է : Մեպտեմբերի մէջ արտաքոյ կարգի փոփոխութիւններ կ'ըլլան իր վրան . իր սովորական երկչոտութիւնը վրայէն կը թօթափէ , կոյր կատաղութեամբ մը կը բորբոքի , և շատ վտանգաւոր ու զգուշալի է՝ նոյն իսկ մարդկանց համար . կոկորզն ու վիզը կ'ուռին , անախորժ և զօրաւոր ձայնով մը կը պուայ , ինքզինքը կը նեղէ կը տանջէ , քիչ կ'ուտէ , ամենևին չբնանար . և թէ որ յանկարծ ուրիշ եղջերուի մը հանդիպի , իրարու վրայ կը յարձակին , և եղջիւրներով ու գլխով իրարու անանկ ուժգին կը զարնեն , որ շատ անգամ՝ ի մահ կը վերաւորուին :

Ամէն հասակի եղջերուներու վրայ երեք շաբաթ կը քշէ այս կատաղութիւնը . ծերերը ամենէն առաջ և ամենէն աւելի սաստիկ կը կատղին . ետեւէն աստիճանաբար կարգը մէկաւնանց ալ կու գայ՝ հասակի կարգաւ , անանկ որ երկու տարուան եղջերուաց վրայ հսկատեմբեր ամսուն կէսէն ետքը կը տեսնուի այս մոլեգնութիւնը : Այլեմբերի մէջ եղջերուները այս խենթութիւններէն յոգնած , աշխատութիւններէ և ժուժկալութենէ ծիրեալ և նիհարեալ , աւելի զիւրաւ կը բռնուին : Արօտութիւն ունենալով հանգչելու և առջի զօրութիւննին ստանալու , անտաններու եզերքները սովորաբար կ'առանձնանան , այնպիսի տեղեր՝ ուր առատ ուտելիք կրնան գտնել , մասնաւորապէս վայրի կաղին , և ինչուան որ զօրանան՝ ան տեղուանքը կը բնակին :

Եղջիւր ութ ամիս և քանի մը օր կը կրէ արգանդին մէջ ձագը . գրեթէ միշտ



Եղջերու եւ Եղնիկ

մէկ ձագ մը կը բերէ, և մայիսի վերջերը կամ յունիսի սկիզբները կը ծնանի: Ըստ խնամք կը տանի անոր վրայ, և ամենայն ճարտարութեամբ կը պաշտպանէ զան որսորդ շանց ձեռքէն. ձագը բոլոր ամառը իր մօրը հետ կը կենայ: Զմեռ ատեն ամէն հասակի եղջերուներն ու եղնիկները խումբ խումբ մէկտեղ ժողվուած անանկ կ'ապրին, և որչափ աւելի ձմեռը սաստիկ ըլլայ, այնչափ ալ այս խումբերը բազմութիւն կ'ըլլան: Վարնան իրարմէ կը բաժնուին. եղնիկները կը պահուրտին իրենց ձագերը ծնանելու համար, եղջերուները՝ իրենց եղջիւրները նորոգելու համար. և այս միջոցիս մատաղ եղջերուները միայն ընկերութեամբ կը քալեն, որովհետեւ իրենց եղջիւրներն աւելի ուշ կը թափին: Հիները կը կարծէին թէ եղջերուն շատ երկայնակեաց է. սակայն քննուած է որ ոչ երբէք քսան տարին կ'անցնի:

Եղջերուները սրատես են, սաստիկ

հոտառութիւն ունին ու սուր ականջ. միանգամայն սրամիտ ալ են, և վտանգներու միջոց այնպիսի ճարտար հնարքներ կը գտնան, որ ասոնց որսը շատ զուարճալի բան է, և փորձ որսորդը միայն կրնայ վերջապէս յաղթել անոնց: Այս կենդանեաց վերջին հնարքը իրենք զիրենք ազատելու համար՝ ջրի մէջ ընկղմին է քիթերնուն ծայրը միայն դուրս թողլով. երբոր այս ալ պարապը երթայ, կը ջանան որ գոնէ փնաս հասցնելով զոհէն կեանքերնին: Այնչափ յարգ չունի եղջերուին միսը. բայց մորթն ու եղջիւրները օգտակար են և կը գործածուին ճարտարութեան ու արուեստից մէջ:

